

Հարցաշար

ԹԵՄԱ 1. Գեոդեզիա առարկան և նրա խնդիրները: Երկրի ձևը և չափերը: Միջօրեականներ և գուգահեռականներ, աշխարհագրական կոորդինատներ: Բացարձակ և հարաբերական բարձրություններ: Երկրի մակերևույթի պրոյեկտումը և պրոյեկտման մեթոդը գեոդեզիայում, քարտեզ: Որպես հարթության ընդունվող մակարդակային մակերևույթի սահմանը հատակագիծ: Համառոտ գաղափար չափման սխալների մասին: Սխալների տեսակները և նրանց ծագումը: Պատահական սխալների հատկությունները: Առանձին չափման միջին քառակուսային սխալը: Միջին թվաբանականի միջին քառակուսային սխալը: Չափման բացարձակ և հարաբերական սխալը: Գեոդեզիայում կիրառվող կոորդինատային համակարգերը: Ընդհանուր գաղափար հանութային աշխատանքների մասին: Մասշտաբներ, նրանց տեսակները և կառուցվածքները: Թվային և Գծային մասշտաբներ, նորմալ ընդլայնական մասշտաբ:

ԹԵՄԱ 2. Կետի նշանակումը: Գծի նշանոդահարելը: Չափող սարքեր: Գծի չափումը պողպատե ժապավենով: Ժապավենի ստուգումը: Գծի բերումը հորիզոնական հարթության վրա, Էկլիմետր: Էկերներ: Պայմանական նշաններ, եզրագծային և արտամասշտաբային պայմանական նշաններ: Տաղամասի կողմնորոշումը աշխարհի կողմերի նկատմամբ: Ազիմուտ, միջօրեականների մերձեցում և մերձեցման բանաձևը: Դիրեկցիոն անկյուններ, ռումբ, ռումբի և ազիմուտի միջև եղած փոխհարաբերությունները:

ԹԵՄԱ 3. Մագնիսական սլաք, դրա շեղումը, մագնիսական ազիմուտ և ռումբ: Բուսուլ, կառուցվածքը: Մագնիսական ազիմուտի կամ ռումբի չափումը բուսուլի օգնությամբ:

ԹԵՄԱ 4. Թեոդոլիտային հանույթ: Հասկացողություն հորիզոնական անկյան անկյունաչափական գործիքի և անկյան չափման մասին: Թեոդոլիտ, նրա դերը գեոդեզիական պրակտիկայում, թեոդոլիտի կառուցվածքի սխեման, թեոդոլիտի ստուգումները, հորիզոնական անկյունների չափումը: Հեռավորությունների որոշումը հեռաչափով, թելային հեռաչափ, հեռարափի հաստատունի որոշումը: Մակերեսների հաշվումը ըստ հատակագծերի: Մակերեսների հաշվման գրաֆիկ եղանակը, բազմանկյան մակերեսի հաշվումը նրա գագաթի կոորդինատներով: Մակերեսների հաշվման մեխանիկական եղանակը, պլանիմետր:

ԹԵՄԱ 5. Եռանկյունաձևի մեթոդը: Եռանկյունաձևի բաժանումը դասերի: Եռանկյունաձևի ման աշխատանքների թվարկումը: Նշանների կառուցումը և կենտրոնների հիմնադրումը: Աշխատանքային հիմնաձևի կապակցումը գեոդեզիակն ցանցերին: Ռելեֆի ձևերը: Ընդհանուր հասկացողություն Նիվելիրացման մասին: Ռելեֆի բնորոշ կետերը: Գծի թեքությունը: Ռելեֆի պատկերումը հատակագծերի և քարտեզների վրա: Հորիզոնականներ: Հատակագծի վրա հորիզոնականների անցկացումը բնորոշ կետերի Նիշերով: Երկրաչափական Նիվելիրացման ընդհանուր սկզբունքները: Նիվելիրացում ☐ դեպի առաջ ☐: Տարբեր տեսակի սխալների ազդեցությունը չափածողով կատարվող հաշվեցույցի վրա: Նիվելիրացում ☐ մեջտեղից ☐: Բարդ Նիվելիրացում: Նիվելիրներ, նրանց կառուցվածքը և ստուգումները, Նիվելիրացումների բաժանումը դասերի: Դրոշմանիշներ և ռեպիրներ:

ԹԵՄԱ 6. Ներածություն: Ընդհանուր երկրաբանության հիմունքներ: Կոսմոգեն հիպոթեզներ, երկրի տեղը համաշխարհային տարածության մեջ, ձևը, չափերն ու կառուցվածքը: Ապարակազմիչ միներալներ: Էնդոգեն, Էկզոգեն և մետամորֆիկ պրոցեսներ: Միներալների մորֆոլոգիական առանձնահատկությունները: Հիմնական տեղեկություններ ապարների մասին, մագմատիկ Նստվածքային և մետամորֆիկ ապարներ: Տեսակները, ստրուկտուրան:

ԹԵՄԱ 7. Նստվածքային տարածումը- շերտավորումներ, դիսլոկացիաներ և ծալքավորումներ, նրանց Էլեմենտները: Գեոխրոնոլոգիա - Երկրի կեղևի պատմությունը: Ապարների բացարձակ և հարաբերական տարիքի որոշումը: Գեոմորֆոլոգիայի հիմունքներ - ռելիեֆի Էլեմենտներն ու ձևերը, ռելիեֆի ձևի դրական ու բացասական խմբերը, նրանց դասակարգումը ըստ չափերի: Ռելիեֆի տեսակները, տիպերը: Գրունտների բնական վիճակին գնահատումը: Գրունտների խմբերը - ժայռային, խոշորաբեկոր, ավազային կավային:

ԹԵՄԱ 8. Յուրահատուկ գրունտներ, նրանց առանձնահատկությունները շինարարական տեսակետից: Ստորգետնյա ջրերի ռեժիմը, շարժման հիմնական օրենքը: Ջրի հոսքի հաշվարկը: Հիդրոերկրաբանական հանույթ: Գեոդինամիկայի հիմունքներ: Սեյսմիկ երևույթներ, նրանց ազդեցությունը կառուցվածքների վրա: Ճարտարագիտական երկրաբանական պայմանների ազդեցությունը սեյսմիկ ինտենսիվության վրա: Հողմահարում, հողմահարման հետևանքով առաջացած գոյացումներ, նրանց

դասակարգումը: Մակերևութային ջրերի երկրաբանական գործունեությունը: Ճարտարագիտական-երկրաբանական հետազոտություններ, կատարման փուլերը, մեթոդները:

Լաբորատոր աշխատանքներ (ճարտ. գեոդեզիա)

1. Գծագրական գործիքներ /շտանգեն-կարկին, տրանսպարտիր/:
2. Աշխատանք քանոնի, եռանկյունու և տրանսպարտիրի միջոցով:
3. Մասշտաբներ, նրանց տեսակները և կառուցվածքները: Նորմալ ընդլայնական մասշտաբ:
4. Գծերի նշանոդումը և երկարությունների չափումը:
5. Անկյունաչափական գործիքներով ուղղաձիգ և հորիզոնական անկյունների չափումը:
6. Տեղամասի մակերեսի նիվելիրացում:
7. Գծերի և երկարությունների չափումը հեռաչափական տարբեր գործիքներով:
8. Գծով նիվելիրացում:

Լաբորատոր աշխատանքներ (ճարտ. երկրաբանություն)

1. Միներալների որոշումը ըստ հիմնական հատկանիշների /հերձումը, գույնը, բեկվածքը, կարծրությունը, տեսակարար կշիռը/
2. Ապար կազմող միներալների նկարագրությունը ըստ եղած նմուշների:
3. Լեռնային ապարների բյուրեղային կազմի ուսումնասիրությունը:
4. Միներալների և ապարների մանրադիտակային հետազոտությունը:
5. Տոպոգրաֆիական քարտեզի կազմումը:
6. Երկրաբանական կտրվածքի կազմում երկրաբանական քարտեզի և փորվածքների հիման վրա:
7. Շինարարական նյութերի հանքավայրերի պաշարների հաշվումը: